Կարգապահական գործ թիվ ԿԳ-18097

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2018 թվականի օգոստոսի 11-ի թիվ 238-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/186-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԿԱՐԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԳՈՐԾՈՎ)

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Հարություն Հարությունյանի, Խորհրդի անդամներ՝ Հրանտ Անանյանի, Մելանյա Առուստամյանի, Սեդրակ Ասատրյանի, Նելլի Հարությունյանի, Արայիկ Ղազարյանի Կարեն Մեժլումյանի, Կարեն Սարդարյանի կազմով

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Կարինե Սարգսյանին (արտոնագիր՝ թիվ 300) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից 28.03.2018թ. տրամադրված տեղեկանքի՝ փաստաբան Կարինե Սարգսյանն ունի 5.000 (հինգ հազար) ՀՀ դրամ գումարի չափով՝ 2018 թվականի փետրվար ամսվա համար անդամավճարի մուծման չկատարման պարտավորություն (չհաշված նախկին՝ չմարված պարտավորությունը):

2. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

28.03.2018թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի թիվ 179-Ա/ԿԳ-18097 որոշմամբ կարգապահական վարույթ է հարուցվել փաստաբան Կարինե Սարգսյանի նկատմամբ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագիրք)** 2.9.1 ենթակետի խախտման

հատկանիշներով:

Կարգապահական գործի արագացված կարգի համաձայն՝ սույն կարգապահական գործը հանձնվել է Պալատի խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 11.08.2018թ., ժամը՝ 11:48-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ 12 սենյակ):

3. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Փաստաբան Կարինե Սարգսյանը բացատրություն չի ներկայացրել: Փաստաբան Կարինե Սարգսյանին փոստային ծառայության միջոցով ուղարկվել է նիստի մասին ծանուցագիր, սակայն փոստային ծրարը վերջինիս կողմից չի ստացվել: Պալատի աշխատակազմը փաստաբան Կարինե Սարգսյանին խորհրդի նիստի և ժամանակի մասին ծանուցել է հրապարակային կարգով՝ նիստի ծանուցումը հրապարակվել է ՀՀ փաստաբանների պալատի պաշտոնական կայքէջում[1]:

4. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Պալատի խորհուրդն, ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1) փաստաբան Կարինե Սարգսյանը փաստաբանական գործունեության արտոնագիր է ստացել 10.11.1997թ. (հաստատվում է Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքով),
2) փաստաբան Կարինե Սարգսյանն ունի 5.000 (հինգ հազար) ՀՀ դրամ գումարի չափով՝ 2018 թվականի փետրվար ամսվա համար անդամավճարի մուծման չկատարման պարտավորություն (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 28.03.2018թ. տրամադրված տեղեկանքով),
3) փաստաբան Կարինե Սարգսյանն իր անդամավճարի պարտքը չի մարել (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 10.08.2018թ. Խորհրդին տրամադրված տեղեկանքով):
4) փաստաբան Կարինե Սարգսյանի նկատմամբ անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու համար 7 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (հաստատվում է Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 10.08.2018թ. տրամադրված տեղեկանքով):

5. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 10.08.2018թ. տրամադրված տեղեկանքի համաձայն Կարինե Սարգսյանի (արտոնագիր՝ 300, ստացված՝ 10.11.1997թ.) նկատմամբ 2013-2018թթ. ընկած ժամանակահատվածում

[1] http://advocates.am/news/view/2121.html

10 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (6 ավարտված վարույթ և 4 ընթացիկ վարույթ), որոնցից յոթը՝ անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու, իսկ երեքը՝ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու պարտականությունը չկատարելու հիմքով: Անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու հիմքով ավարտված կարգապահական վարույթներից 4-ով ենթարկվել է կարգապահական պատասխանատվության:

Խորհրդի՝ 28.09.2015թ.-ի թիվ ԿԳ/108-Ա որոշմամբ անդամավճարի վճարման պարտականությունը չկատարելու համար ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ նկատողության ձևով:

Խորհրդի՝ 04.08.2016թ.-ի թիվ ԿԳ/80-Ա որոշմամբ անդամավճարի վճարման պարտականությունը չկատարելու համար ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ նկատողության ձևով:

Խորհրդի՝ 12.12.2016թ.-ի թիվ ԿԳ/92-Ա որոշմամբ անդամավճարի վճարման պարտականությունը չկատարելու համար ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ խիստ նկատողության ձևով:

Խորհրդի՝ 27.02.2018թ.-ի թիվ ԿԳ/25-Ա որոշմամբ անդամավճարի վճարման պարտականությունը չկատարելու համար ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ տուգանք՝ 5.000 ՀՀ դրամի չափով:

<u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող գործում առկա ապացույցները և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները, Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Կարինե Սարգսյանին պետք է ենթարկել կարգապահական պատասխանատվության, հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերության համաձայն՝ *փաստաբանը փաստաբանների պալատի սահմանած չափով և կարգով մուծում է անդամավճար՝ փաստաբանների պալատի ընդհանուր պահանջների և փաստաբանական գործունեության իրականացման հետ կապված այլ ծախսերի համար: Նույն օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է մուծել անդամավճարներ:*

Համաձայն «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1. կետի՝ *փաստաբանը պարտավոր է սահմանված կարգով և չափով Պալատին վճարել անդամավճար:*

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013թ.-ին թիվ 33/6-Լ որոշմամբ ընդունված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգի (այսուհետև Կարգ) 7-րդ կետի՝ *փաստաբանները յուրաքանչյուր ամսվա համար անդամավճարների վճարումը կատարում են հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև տասնհինգը, իսկ նույն Կարգի 21-րդ կետով սահմանվում է, որ ամենամսյա վճար վճարելու պարտականությունը խախտելու համար*

փաստաբանը կամ օգնականը ենթակա են կարգապահական պատասխանատվության:

Վերոնշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ սահմանված ժամկետներում անդամավճար չվճարելու համար փաստաբանն ենթակա է պատասխանատվության:

Փաստաբան Կարինե Սարգսյանը խախտել է վերը նշված նորմերի պահանջները, որն ապացուցվում է գործում առկա՝ ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից 28.03.2018թ. տրամադրված տեղեկանքով: Խորհուրդը կարգապահական տույժ նշանակելիս հաշվի է առնում, որ սույն որոշումը կայացնելու դրությամբ փաստաբանը նախկինում նմանատիպ խախտման համար ենթարկվել է կարգապահական տույժերի:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասի 14–րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9. հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի պահանջներով՝ Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Կարինե Սարգսյանին (արտոնագիր՝ թիվ 300) ճանաչել մեղավոր «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և Կանոնագրքի 2.9.1. ենթակետի պահանջների խախտման համար:

2. Փաստաբան Կարինե Սարգսյանի (արտոնագիր թիվ 300) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ տուգանք 15.000 ՀՀ դրամի չափով:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Կարինե Սարգսյանին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ **Հարություն Հարությունյան**

11 օգոստոսի 2018թ.
թիվ ԿԳ/186-Ա
ք. Երևան